ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-Ի MASTERCARD ՔԱՐՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱՐՇԱՎ

Ամերիաբանկի ֆիզիկական անձ հաճախորդները, 03.11.2026-03.02.2027թ. ներառյալ Ամերիաբանկի կողմից թողարկված Mastercard վճարային համակարգի ցանկացած քարտատեսակով կատարելով միջազգային գնումներ, հնարավորություն կունենան մասնակցելու վիճակախաղի, որտեղ խաղարկվում են Amazon ընկերության նվեր քարտեր: Նվեր քարտերը կարող են օգտագործվել Amazon հարթակում:

1. Արշավի գործողության յուրաքանչյուր 30 օրվա արդյունքներով Mastercard վճարային քարտերով միջազգային գործարքների ամենամեծ քանակն իրականացրած առաջին 15 մասնակիցներից յուրաքանչյուրը կստանա Amazon նվեր քարտ՝ 500 /հինգ հարյուր / ԱՄՆ դոլար անվանական արժեքով, իսկ հաջորդ 100 մասնակիցներից յուրաքանչյուրը՝ Amazon նվեր քարտ՝ 100 /հարյուր/ ԱՄՆ դոլար անվանական արժեքով:
2. Արշավի շրջանակում մեկ գործարքի նվազագույն արժեքը սահմանվում է 30,000 ՀՀ դրամ կամ համարժեք գումար այլ արժույթով՝ Բանկի կողմից կիրառված փոխարժեքով[1]:
3. Արշավի պայմաններին համապատասխանող միջազգային գործարքները ներառում են ինչպես Հայաստանի տարածքից դուրս առևտրի/սպասարկման կետերում ֆիզիկական քարտի օգտագործմամբ գործարքները, այնպես էլ միջազգային առևտրային հարթակներում առցանց կատարված և հաջողված գործարքները: Գործարքները կարող են կատարվել այդ թվում թոքենացված (ApplePay, Gpay դրամապանակներին կցված) քարտերով: Միջազգային առևտրային հարթակների մեջ ներառված չեն հայաստանյան բանկերի POS կամ

[1] Գործարքի գումարի ՀՀ դրամով համարժեք գումարը ստանալու համար կիրառվում է գործարքի կատարման օրվա համար ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը:

vPOS տերմինալներով աշխատող կայքերն ու հավելվածները, այդ թվում, օրինակ, Wildberries, Ozon:

4. Հետևյալ գործարքները չեն ներառվում գործարքների ընդհանուր քանակի հաշվարկում՝
    - հաշիվներից և/կամ քարտերից կանխիկացումներ,
    - հաշիվներից և/կամ քարտերից փոխանցումներ,
    - հաշիվների համալրումներ,
    - պարտավորությունների մարումներ,
    - այլ պետության կամ համայնքի բյուջեի օգտին կատարված վճարումներ,
    - դատական ծախսեր,
    - արժեթղթերի հետ կապված գործարքներ,
    - տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարներ,
    - «Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Ազարտային խաղերի», «Վիճակախաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների» սպասարկման կետերում վճարումներ:
5. Չեղարկված, վերադարձված կամ այլ հիմքերով հատուցման ենթակա գործարքները Արշավի շրջանակում չեն հաշվարկվում:
6. Միևնույն քանակով գործարքներ կատարած մասնակիցներից ավելի բարձր տեղը զբաղեցնում է այն մասնակիցը, ում միջազգային գործարքների ընդհանուր գումարն ավելի մեծ է:

7. Յուրաքանչյուր հաճախորդ Արշավի ամբողջ գործողության ընթացքում կարող է ստանալ առավելագույնը մեկ նվեր քարտ: Արդեն հաղթող ճանաչված և նվեր քարտ ստանալու իրավունք ձեռք բերած հաճախորդը արշավի հաջորդ ժամանակահատվածների հաղթողների ընտրությանը չի մասնակցում:
8. Հաճախորդի մի քանի Mastercard քարտերով կատարված բոլոր գործարքները, որոնք համապատասխանում են արշավի պայմաններին, համախմբվում են և հաշվարկվում որպես տվյալ հաճախորդի կողմից կատարված գործարքներ:
9. Եթե մինչև տվյալ ժամանակահատվածի հաղթողների վերջնական ցանկի ձևավորումը գործարքի չեղարկման, վերադարձի կամ այլ հիմքերով գործարքի գումարի հատուցման հետևանքով փոխվում է մասնակցի՝ Արշավի շրջանակում հաշվարկվող գործարքների քանակը, հաղթողների ցանկը վերահաշվարկվում է, և համապատասխան նվեր քարտը տրամադրվում է Արշավի պայմաններին համապատասխան հաջորդ մասնակցին:
10. Յուրաքանչյուր ժամանակահատվածի հաղթողների վերջնական ցանկը ձևավորվում է այդ ժամանակահատվածին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:
11. Հաղթող ճանաչված հաճախորդները տեղեկացվում են Բանկում գրանցված հեռախոսահամարին SMS հաղորդագրության և/կամ գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրության միջոցով:
12. Նվեր քարտը կարող է օգտագործվել Amazon հարթակում՝ նվեր քարտի թողարկողի (Amazon) կողմից սահմանված պայմաններին համապատասխան: Նվեր քարտի գործողության ժամկետը 5 տարի է (թողարկման օրվանից), եթե թողարկողի (Amazon) կողմից այլ պայման սահմանված չէ: Գործողության ժամկետի ավարտից հետո չօգտագործված նվեր քարտը համարվում է անվավեր:
13. Նվեր քարտ տրամադրվում է այն անձանց, որոնք դրա ստացման դրությամբ Բանկի հաշվետեր են և Mastercard քարտ ունեցող հաճախորդ: